ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իր հայրապետական այցելությունները ներքին թեմերին տալուց հետո, սույն թվականի հունվարի 9-ին ազգիս Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ն, ընդառաջելով Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան և արևմտյան թեմերի հայոց թեմական առաջնորդներ Տ. Խաժակ և Տ. Վաչե արքեպիսկոպոսների, ինչպես նաև Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոսի հրավերներին, հովվապետական այցելության մեկնեց Միացյալ Նահանգներ և Կանադա՝ հայկական եկեղեցական համայնքներին անձամբ տանելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենարար օրհնությունը, Տիրոջ հրաշափառ շնորհների ներքո, Սփյուռքի հեռավոր ափերին ապրող իր բոլոր հոգևոր զավակներին՝ համրապնդումն մեր նախնյաց սուրբ հավատքի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սիրով միության և ազգային միասնականության:

Վեհափառ Հայրապետի հմայիչ անձնավորության և հեղինակության մեջ հայ ժողովրդի տարասփյուռ զավակները շոշափելիորեն մարմնացած կտեսնեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու վերածնված անկախ Մայր Հայրենիքը և շուրջ մեկ ամիս կապրեն հոգևոր և ազգային ճշմարիտ հպարտության օրեր:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն ուղևորությունը պատմական մեծ նշանակություն կունենա՝

Հոգևոր-ազգային կյանքի շինության և ազգային գիտակցության արթնացման իմաստով.

Միջեկեղեցական հանդիպումների մակարդակի վրա էկումենիկ ոգու ամրապնդման իմաստով.

Պետական լայն շրջանակների միջև:

Թող Աստված զորավիգ կանգնի մեր սիրեցյալ Վեհափառին, որպեսզի նա իրեն հատուկ անսասանությամբ առաջնորդի մեր փոքրիկ ածուն ի փառս Աստուծո:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Սուրբ Էջմիածին,

10 հունվարի 1996 թ